

լուսազրույթեանց, և շատ անգամ իբրև  
լուսազրույթիւն կը վաճառուին:

Դեռ ևս ուրիշ փափաք մըն ալ կը  
մնայ անկատար, որ է գունեղ լուսա-  
զրույթիւնը: Մինչև հիմա առարկայից  
ճիշդ ձևը նկարուեցաւ, բայց ամենքն  
ալ միագոյն, որ կը փոփոխի ըստ բնու-  
թեան գործածուած աղից և նիւթոց:

Պէտք է նկարել առարկայի բոլոր իր  
զոյներովն ինչպէս է բնութեան մէջ:

Արդէն ետմանա Պէքըրէլ զազդիացի  
բնագէտը կրցեր է տակէրատպութեամբ  
նկարել այնպիսի պատկերներ որ բնա-  
զրին ամեն գոյներն ունէին, բայց այս  
պատկերները կը նմանին Ռէճուտի  
և Տէվիի թղթի վրայ հանած առաջին  
պատկերներուն, հաստատուն չեն, և  
հետևաբար չեն կրնար պահուիլ երկար  
կամ կարճ ժամանակ. բայց եթէ լուսե  
դուրս:

ԻՆՉՊԵՏ ԶԻՆԸ ԿԸ ԶԵՆՈՆԱՅ. — Տարւոյս  
առաջին օրը տեղի ունեցաւ 'ի Բարիզ Աշ-  
մաֆեր (մթնոլորտ) անունով օդապարիկ  
գնտոյն երկինք վերանալն: Այս օդային  
ճամբորդութիւնն որանաւոր յաջողեցաւ,  
բաց 'ի ուրիշ նշանաւոր դիտողութեանց,  
այս առաւելութիւնն ալ ունեցաւ, որ քանի  
մը վայրկեան թող տուաւ արիստիտ օդա-  
նաւորացոյ հանդիսատես ըլլալ ձնան ձևա-  
նալուն:

Օդապարիկ գունտն երկրէս վերացաւ  
առաւօտեան ժամ 11, ըրպէ 40: Օդանա-  
ւորքը ութ հարիւր մէգր բարձրութեամբ  
կտրեցին անցան ամպերուն ստորին խաւը,  
որուն թանձրութիւնն էր իբր 700 մէգր:  
Այս շղթիներէն վեր օդուն մէջ կը ծածանէր  
կարգ մը սառուցէ ճշմարիտ բիւրեղներու,  
երկրաչափական կանոնաւոր ու զանազան  
ձևերով, որոնք արևուն ճառագայթներէն  
կը շողջողային ազամանդի նման: Ամպերու  
ուրիշ խաւ մըն ալ սակէ իբր 800 մէգր վեր  
կը ծածանէր, և մերթ ընդ մերթ բացուելով  
արևուն ճառագայթիցն անցք կու տար,  
որոնք պայծառ կը փայլէին: Օդանաւորքը  
կրցան խել մը ժամանակ ներկայ ըլլալ այս  
զարմանալի տեսարանին առանց զգալու  
մեծ ցուար մը. իրենց ջերմաչափը գրոյէն  
2 և 3 աստիճան վար իջեր էր:

Յետ ճանապարհորդելու երեք ժամ, 1500  
մէգրէն մինչև 1800 մէգր բարձրութեամբ,  
դէպ 'ի հարաւային արևմուտք, այն օդա-  
պարիկ գունտը յաջողութեամբ ու փանո-  
նաւոր կերպով իջաւ Իլիէր (Illiers) ըսուած  
տեղը, Գաղղիոյ Էոն և Լուառ (Eure-et-  
Loire) գաւառին մէջ:

ՅՈՐԻՏ 1876 ԱՍԽ. — Այս տարի ցուրտը  
տեղ տեղ արտաքոյ կարգի եղաւ:

Գաղղիա շատ սաստիկ էր, մինչև ան-  
գամ ձինէն ճամբաները գոցուեցան ու  
երթևեկութիւնն օրերով խափանուեցաւ:  
Բարիզու Պուլոնը անտառին լճերը Նեւա  
գետոյն պէս սառեցան: Իսկ հիւսիսային  
այս մեծ գետը սառուցի ամբողջ զանգուած  
մը դարձեր էր: Բեդրպուրկի վրայ այս  
ձմերան չափազանց խստութիւնը, ըստ ա-  
սելոյ լրագրաց այն ժամանակին, տխրու-  
թեան քօլ մը ձգեր էր, և սառեցուցեր էր  
քաղաքական կանանք, ինչպէս նաև եղա-  
նակին աշխարհային զուարճութիւնը: Հա-  
րիւրորդամասն ջերմաչափը կը ցուցնէր  
32 աստիճան գրոյէն վար, հրապարակա-  
կան կանթեղները անորոշ և անբաւական  
լոյս մը կու տային, կառաց անիւները ձնան  
վրայէն սահելով ահաւոր շառաչիւն կը հա-  
նէին, որ ամենեկին անձանօթ է տաւելի բա-  
րեխաուն կլիմայից բնակչացը: Թշուառ կա-  
ռավարները և գործուորներն, որոնք պար-  
տաւորուած էին այն բեւեռային օդուն դէմ  
դիմագրաւել, մանիշակագոյն դէմք մը ա-  
ռեր էին, կախ սառույցներով շրջապատած:  
Ոտքով քաղողները վազելով կ'երթային ու  
երեսին թանձր մուշտակով կը ծածկէին.  
անեն տեղ բոլոր խօսակցութեանց նիւթն  
էր եղանակին խստութիւնը. ամենուն վրայ  
տիրած էր գլխու ծանրութիւն, անճարու-  
թիւն, թէև արուեստական ջերմութեամբ  
բնակարանին տաքցուցած ըլլային: